

իր 1634ին : Յիշատակագիր մը կը գրէ . «Գրեցաւ Ս . Աւետարանս ի դառն եւ ի նեղ ժամանակիս . . . ի յերկիրս Վերին Չակամ , ի գիւղս որ կոչի Շաքարպէկ , ձեռամբ . . . Յովհաննէս երիցոյ . . . ի հայրապետութեան սուրբ յաթուոյն էջմիածնայ տեառն տէր Մովսէսին , որ կրկին լուսաւորեաց զՀայաստան աշխարհս եւ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս . հայրապետութիւն Ազուանից տէր Յովհաննէսին որ մատնաւ ի ձեռն պարսիկ ազգին . տարան ի դուռն Շահի . վերջն Աստուած գիտէ . եւ եպիսկոպոսութեան պարոնտէր Բարսեղին , ի թուականին Հայոց ՌՁԲ . ի ժամանակս Շահ Սեֆուն» (տպ . Շահբասին) ⁸ :

Իր յաջորդն՝ Գրիգոր ընտրութեան հաստատագիրն ընդունեցաւ Շահ-Սեֆիէն 1635 Յունուար 1ին ⁹ :

Մեխլու կաթողիկոսարանի Դպրատունը մտած պիտի ըլլայ 1606էն ետքը :

2. Կը գրէ Դարանաղցի թէ Սարգիս եպ . , Կիրակոս Տրապիզոնցի , Մովսէս եւ Պօղոս վարդապետները Մեխլուի դէմ թղթեր գրած են : Այս կարող էր տեղի ունեցած ըլլալ 1614—1620 տարիներուն . որովհետեւ Մովսէս Սիւնիք վերագարծաւ 1613ի վերջերը , իսկ Սարգիս եւ Կիրակոս վախճանեցան 1620ին :

⁸ Աւետարան Հախում գիւղի : Արճազանք , 1888 , էջ 162 : Թոփճեան , Յուլիս , Ա . , 89 , մահը կը նշանակուի ՌՁԲին :

⁹ Ջալալեանց , անդ , Բ . , էջ 487—488 : Ջամբա , 79 : Թոփճեան , Յուլիս , Ա . , էջ 89 :